**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 618
*22 հոկտեմբեր 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 106-Ա և 107-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր ՝ Լ Ե Վ Ո Ն Ջ Ա Վ Ա Ր Յ Ա Ն

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*
*098 048 046*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 106-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի թիվ 1066 – Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին հավելվածի 7–րդ և 8– րդ կետերով՝ որոշում եմ.

1.Համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0050-0001 ծածկագրից առանձնացված 0.01289 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք՝այլ հողատեսքերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի, փոխադրել գյուղատնտեսական նշանակության ավելի բարձրարժեք հողատեսքի՝ որպես 5-րդ կարգի խոտհարքի:
2.Համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 107-Ա

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 26-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքում 2018թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 49-Ն որոշումը և Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակչուհի ԱՁ Անահիտ Սահակյանի հայտը՝
որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի Լորուտ գյուղի բնակչուհի ԱՁ Անահիտ Սահակյանին՝ 2018թ. հուլիսի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ